ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 10.11.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-67/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.07.2016թ. թիվ 1/73-3/17851-16 գրությամբ ներկայացված «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01828355) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-67/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 12.03.2016թ. թիվ 1/73-3/9150-16 և 30.03.2016թ. թիվ 1/73-3/10872-16 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի ԵՄԴ/0023/04/15 քաղաքացիական գործով 12.05.2015թ. վճիռը, Կառավարչի և պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը նշանակելու մասին 09.06.2015թ. որոշումը, ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-67/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 08.11.2016թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.10.2015թ. թիվ

ԴՎԱ/2582 գրության հիման վրա, 12.03.2016թ. թիվ 1/73-3/9150-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության վերը նշված գրությունը՝ կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Ներկայացված հիմքերի ուսումնասիրման ընթացքում Կենտրոնը պարզել է, որ առկա է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵՄԴ/0023/04/15 քաղաքացիական գործով 12.05.2015թ. կայացված և արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: Միաժամանակ ներկայացված նյութերում առկա է նաև Կառավարիչի և պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը նշանակելու մասին 09.06.2015թ. որոշումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը 22.03.2016թ. թիվ 01/04.1/1118-16 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել վերջինիս դիրքորոշումը Նախարարության 12.03.2016թ. թիվ 1/73-3/9150-16 գրության հիման վրա Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու անհրաժեշտության վերաբերյալ:

Նախարարությունը 30.03.2016թ. թիվ 1/73-3/10872-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2016թ. թիվ 02/04.1/2017-16 գրությամբ արձանագրել է, որ «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.07.2016թ. թիվ 1/73-3/17851-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵՄԴ/0023/04/15 քաղաքացիական գործով 12.05.2015թ. կայացված և արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ, սակայն, համաձայն «Սնանկության

մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ Ընկերությունը կարող էր դիմել դատարան վերը նշված պայմանագրերի շրջանակներում չմատակարարված ապրանքները մատակարարելու նպատակով որոշում կայացնելու վերաբերյալ:

Նախարարությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց:

2. «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն 27.08.2015թ. թիվ 17 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել, որ Ընկերությունը սնանկ է ճանաչվել, որի պատճառով չի կարող մատակարարել ՀՀ պաշտպանության նախարարության և «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 27.12.2014թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/2-1» և 28.02.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/10-2» ծածկագրերով պայմանագրերով նախատեսված ապրանքների չմատակարարված քանակը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.10.2015թ. թիվ ԴՎԱ/2582 գրությամբ դիմել է Նախարարությանը և հայտնել, որ Պատվիրատուն «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի հետ 27.12.2014թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/2-1» և 28.02.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/10-2» ծածկագրերով դեղորայքի գնման պայմանագրերը 3.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով միակողմանի լուծել է:

Պատվիրատուն նույն գրությամբ միաժամանակ տեղեկացրել է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 12.05.2015թ. վճռով «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:

4. ՍՑ-ԳԲԽ-67/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 08.11.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.07.2016թ. թիվ 1/73-3/17851-16 գրությամբ ներկայացված «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01828355) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-67/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 07.07.2016թ. թիվ 1/73-3/17851-16 գրությամբ ներկայացված «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի միջև ***27.12.2014թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-9/2-1»*** ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր 1)՝ թվով 3 չափաբաժինների մասով:

2. Պայմանագիր 1-ի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել է ձեռք բերել թվով 3 չափաբաժիններով նախատեսված գնման ենթակա հետևյալ ապրանքները՝

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Մեկ միավ. գին /դրամ/	Ընդհանուր գումար/դրամ	2015թ.2-րդ եռամսյակ	2015թ.3-րդ եռամսյակ	2015թ.4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2015թ.
1	Ակվատաբս 3,5մգN10	տուփ	5000	180	900000		2000	3000
2	Ցիպերմաքսին	լիտր	400	6500	2600000	200	200	
3	Քլորակիր	կիլոգրամ	25000	534	13350000	15000		10000
Ընդա-մենը				16850000				

3. ՀՀ պաշտպանության նախարարության և «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի միջև ***28.02.2015թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-9/10-2»*** ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր 2)՝ թվով 7 չափաբաժինների մասով:

4. Պայմանագիր 2-ի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել է ձեռք բերել թվով 7 չափաբաժիններով նախատեսված գնման ենթակա հետևյալ ապրանքները՝

Հ/հ	Ապրանքի անվանումը՝ միջազգային համընդհանուր (ջեներիկ)կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	Չ/մ	միավորի գինը	Քանակ	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, /ոչ ուշ 20.12.2015թ.
1	Անտիռաբիկ վակցինա	հավաքածու	7,800.000	300		100	100	100
2	Օձի պոլիվալենտ սիճուկ	տուփ	108,000.00	70		70		
3	ԻՆՍԻ 15մլ հակապրեսպիրանտ ոտքերի համար	տուփ	890.00	1000		300	300	400
4	Կարդիոլիպինային անտիգեն	տուփ	6,500.00	30	30			
5	Հակագանգրենոզ շիճուկ 20,0	դոզա	108,000.00	30				30
6	Հեմակոն արյան և պլազմայի Պաշարման և պահպանման Համար երկպարկ CPDA-1 450/300	հատ	1,500.00	1500		700	800	
7	Օնդանսենտրոն(Օնդանսենտրոն հիդրոքլորիդի դիհիդրատ)ondansetron (ondansetron hydrochloride dehydrate)	սրվակ	850.00	25	25			

5. «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն 27.08.2015թ. թիվ 17 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել, որ Ընկերությունը սնանկ է ճանաչվել, որի պատճառով չի կարող մատակարարել ՀՀ պաշտպանության նախարարության և «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 27.12.2014թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/2-1» և 28.02.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/10-2» ծածկագրերով պայմանագրերով նախատեսված ապրանքների չմատակարարված քանակը:

6. ՀՀ պաշտպանության նախարարությունը 28.10.2015թ. զեկուցագրով հայտնել է, որ «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն գտնվում է սնանկ ճանաչվելու գործընթացում, որի պատճառով չի կարող մատակարարել Պայմանագիր 1-ով և Պայմանագիր 2-ով նախատեսված և դեռևս չմատակարարված ապրանքները:

7. Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից 28.10.2015թ. դրությամբ չեն մատակարարվել՝

ա) «ՇՀԱՊՁԲ-9/2-1» պայմանագրի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներով նախատեսված ապրանքներից՝

- ակվատաբս 3,5մգ N10՝ 4565 տուփ (1-ին չափաբաժին)
- ցիպերմաքսին՝ 400 լիտր (2-րդ չափաբաժին)
- քլորակիր՝ 25000կգ (3-րդ չափաբաժին)

բ) «ՇՀԱՊՁԲ-9/10-2» պայմանագրի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներով նախատեսված ապրանքներից՝

- անտիռաբիկ վակցինա՝ 285 հավաքածու (1-ին չափաբաժին)
- օձի պոլիվալենտ սիճուկ՝ 55 տուփ (2-րդ չափաբաժին)

- հակագանգրենոզ շիճուկ 20,0՝ 30 դոզա (5-րդ չափաբաժին)
- հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ CPDA-1 450/300՝ 800 հատ (6-րդ չափաբաժին)

8. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵՄԴ/0023/04/15 քաղաքացիական գործով 12.05.2015թ. կայացված և արդեն օրինական ուժի մեջ մտած վճռով «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: Առկա է նաև Կառավարչի և պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը նշանակելու մասին 09.06.2015թ. որոշումը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-67/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով (տվյալ դեպքում «ՇՀԱՊՁԲ-9/2-1» և «ՇՀԱՊՁԲ-9/10-2» ծածկագրերով պայմանագրերով) նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ արգելվում է առանց դատարանի որոշման ***պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը:***

Պայմանագիր 1-ի և 2-ի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

Պայմանագիր 1-ի և 2-ի 3.1.7.1-ի կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 27.12.2014թ. և 28.02.2015թ. կնքվել են համապատասխանաբար «ՇՀԱՊՁԲ-9/2-1» և «ՇՀԱՊՁԲ-9/10-2» ծածկագրերով պայմանագրեր:

Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրերի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1 տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքները՝ Հավելված N 2 գնման ժամանակացույցերով սահմանված ժամկետներում և քանակությամբ:

Այսպիսով, Ընկերության կողմից Պայմանագիր 1-ով և Պայմանագիր 2-ով նախատեսված համապատասխանաբար՝ թվով 3 (1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններ) և թվով 4 (1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններ) չափաբաժիններով ապրանքները սահմանված ժամկետում (սկսած 2-րդ եռամսյակից) չմատակարարելու արդյունքում, Պատվիրատուի կողմից վերը նշված Պայմանագրերը 28.10.2015թ. միակողմանի լուծվել են:

Ներկայացված հիմքերի ուսումնասիրման ընթացքում պարզվել է, որ առկա է ***Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵՄԴ/0023/04/15 քաղաքացիական գործով 12.05.2015թ. կայացված և արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:*** Միաժամանակ, ներկայացված նյութերում առկա է նաև Կառավարիչի և պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը նշանակելու մասին 09.06.2015թ. որոշումը:

Այսպիսով, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի **12.05.2015թ.** կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ, ուստի նման պայմաններում, համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի, «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ն վկայակոչված վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրավունք չուներ, առանց դատարանի որոշման կատարել ՀՀ պաշտպանության նախարարության հետ 27.12.2014թ. և 28.02.2015թ. կնքված համապատասխանաբար «ՇՀԱՊՁԲ-9/2-1» և «ՇՀԱՊՁԲ-9/10-2» ծածկագրերով պայմանագրերով 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար նախատեսված պայմանագրային պարտավորությունները:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների նախարարության այն դիրքորոշմանը, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ Ընկերությունը կարող էր դիմել դատարան վերը նշված պայմանագրերի շրջանակներում չմատակարարված ապրանքները մատակարարելու նպատակով որոշում կայացնելու վերաբերյալ, ապա Խորհուրդը գտնում է, որ դատարան դիմելը դա Ընկերության իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 07.07.2016թ. թիվ 1/73-3/17851-16 գրությամբ ներկայացված «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01828355) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Գրիգորյան**

Անդամ՝ **Մնացականյան Հասմիկ**